

# ԻՆՉ ԳԻՏԵԼՔ ՄԵԼՔ


## ԵՐԿԱՌԹԻ ՄԱՍԻՆ

Թ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Երկրահանքաբանական գիտ. թեկնածու

Նախնադարյան գործիքից մինչև արբանյակ


Առաջին մետաղը, որի հետ մարդը ծանոթացել է, դա երկարն է: Ծիշտ է, սկզբում մարդը նրանից պատրաստել է շատ հասարակ, պրիմիտիվ գործիքներ, բայց այս հեղաշրջում է կատարել մարդու կյանքում: Անցել են դարեր: Մարդը շարունակ նորանոր մետաղներ է հայտնաբերել: Նա ծանոթացել է արծաթի և ոսկու հետ: Սրանք շացրել են մարդուն իրենց զույնով, փայլով, «ազնվությամբ»: Սակայն ոսկին, որ համարվել է հարստության խորհրդանիշը, մարդկային առաջընթացում ունեցած իր դերով միշտ «քարշ է եկել» մյուս մետաղների «պոչից»:



Եվ այսպես, մարդուն հետպիտեն հայտնի են դարձել երկրի վրա գտնվող գրեթե բոլոր մետաղները: Բայց և ոչ մի նոր մետաղ, որքան էլ կարևոր եղած լինի նրա դերը մարդու կյանքում, չի փոխարինել երկարին, չի մղել նրան «հետին պլան», չի նսեմացրել նրա «մեծությունը»:

Ներկայումս մարդուն հայտնի են երկրի կեղևում գոյություն ունեցող գրեթե բոլոր էլեմենտները: Մեծ համբավ ունեն հազվագյուտ մետաղները, բայց չէ որ նրանք արդյունաբերական կաթսայի համեմունքներն են միայն: Ի՞նչ կլիներ նրանց վիճակը առանց երկարի: Կամ մի՞թե հնարավոր էր արդյունահանել և օգտագործել ատոմային դարի մետաղները՝ ռադիոակտիվ էլեմենտները, կամ արբանյակներ ուղարկել տիեզերը: Ի՞նչ կաներ քաղաքակրթությունն առանց այդ սև, անհրապույր մետաղի: Դժվար է պատկերացնել թե

## Ի՞նչ կլիներ առանց երկաթի



Ով կարող է մատնացուց անել թեկուց մի աննշան առարկա, որ պատրաստված լինի առանց երկաթի մասնակցության: Այն սեղանը, որի մոտ դուք նստած եք, այն գրիչը, որով գրում եք, այն զգեստները, որ կրում եք, այն գիրքը, որի ընթերցումը երեկ վերջացրիք, այն ծրաբը, որով դուք վաղը նամակ կտանաք, այս ամսագիրը, որ ձեր ծեռորումն է և այն բոլորը, որ կարելի է թվարկել անվերջ, պատրաստվում են երկաթի օգնությամբ կամ ուղղակի նրանից:

Առանց երկաթի չեք լինի ո՛չ երկաթուղին, ո՛չ ինքնաթիոը, ո՛չ նավը, ո՛չ որևէ գործարան, ո՛չ որևէ հվոր զենք ու գործիք: Իհարկե, եղել են ժամանակներ, երբ մարդն ապրել ու աշխատել է առանց երկաթի: Զեռով հյուտել է իր ծայրատիճան հասարակ հագուստը, ապրել է գետնափոր տներում և ճանապարհորդել լավագույն դեպքում փայտաշեն սալլով: Այդպես էլ կշարունակվեր մարդու կյանքը, եթե չլիներ երկաթը:

## Վաղուց է արդյոք, ինչ հայտնի է երկաթը

Դեռևս մեր թվականությունից 4000 տարի առաջ գրքած եգիպտական պապիրուսներում տեղեկություններ կան երկաթի գործածության մասին: Ենթադրույ են, որ մարդը մինչև հանրանյութերից երկաթ ստանալը ծանոթացել է մետորհիտների երկաթի հետ:

Առաջին երկաթե գործիքները պատրաստվել են մ.թ. ա. երկրորդ հազարամյակում Եգիպտոսում, Ասորեստանում, Հնդկաստանում, Չինաստանում, Անդրկովկասում և այլ վայրերում:

Անգլիացի հնագետ Ս. Կ. Դիկշիորի կարծիքով առաջինն աշխարհում հայ լեռնցիներն են օգտագործել երկաթը, դրանով իսկ հիմք դնելով երկաթի գյուտին ու երկաթե դարին:

Երկաթի արդյունաբերական շահագործումն սկսվել է մեր թվականությունից 800 տարի առաջ: Երկաթահանքը հալելով հնոցներում մարդն ստանում էր տծեւ մետաղյա մարմիններ և այնուհետև ծեծելով ամուր քարատեսակների միջոցով մշակում էր դրանք:

Բայց, եթե դրվեց դոմնային վառարանների հիմքը, երկաթի կիրառումն ընդունեց վիթխարի չափեր:



Գրեթե բոլորն էլ գիտեն, որ Երկարի տաքացման և արագ սառեցման պրոցեսը, որ կոչվում է մխում, նրան մեծ ամրություն է տալիս: Այս գաղտնիքը մարդուն փաղուց է հայտնի:

Հույսն նշանավոր փիլիսոփա Արիստոտելը, որ ապրել է մեզանից 2300 տարի առաջ, տեղեկացնում է մեզ այն մասին, որ Հունաստանում դեռ այն ժամանակ Երկարը միտելիս են եղել: Սկզբնական շրջանում Երկարի մխման պրոցեսը խիստ գաղտնի էին պահում:



Քուրմերի ձեռագրերում պահպանվել են Երկարը մխելու գայրագ դեղատոմներ: Նրանց տաճարներում պահպանված մի այդպիսի դեղատոմի օրինակ է բերվում Լոնդոնի «Երկարի և պողպատի ինստիտուտի տեղեկագրքում»: «Տաքացնել դաշույնը, մինչև որ նա ստանա անապատում ծագող արևի գույնը, և, այնուհետև, այդ շիկացած դաշույնը խրել ուժեղ ստրուկի մարմնի մեջ և պահել այնքան, մինչև դաշույնն ստանա արքայական ծիրանու գույն»: Այս բարձարության հիմքում ընկած է եղել նաև այն խորը տգիտությունը, թե Երկարը արյան մեջ է ավելի լավ մխվում, ուան օռում:

Երկարի որակի բարձրացման ու ջերմամշակման շատ գաղտնիքներ մարդուն հայտնի դարձան ավելի ուշ:

**Խոկ ո՞րտեղից են հանում Երկարը**




Սև մետաղների այդ գլխավոր ներկայացուցիչը Երկրակեղեկում ունեցած իր քանակությամբ բռնում է չորրորդ տեղը՝ ետ մնալով միայն թթվածնից, սիլիցիումից և այլումինից: Բնության մեջ Երկարը հանդես է գալիս միացությունների ձևով, որոնք կոչվում են միներալներ: Երկարի միներալները շատ են, բայց որպես հանքանյութ ներկայումս օգտագործվում են միայն մագնետիտը, հեմատիտը, սիդերիտը, իլմենիտը և այլն: Ինչպես և մյուս էլեմենտներն ու միացությունները, Երկարի միներալները նույնպես շատ անհավասար են քաշիված Երկրակեղեկում: Այնտեղ, ուր հանդիպում են խոշոր կուտակումներ, մարդիկ հանում և օգտագործում են դրանք որպես Երկարի հումք: Այդ կուտակումներն ել հենց անվանում ենք հանքավայրեր:

Սովետական Միությունում Երկարի մեծ հանքավայրեր կան Կուրսկում և Ռուբլում: Ուրալի Վիտկայա հանքավայրը արդեն 100 տարի է, ինչ շարունակ Երկար է մատակարարում Երկրին: Խոկ Մագնիտնայա հանքավայրում հանքաքարի հանման և տեղափոխման համար կառուցված Երկարությունը, միայն հանքավայրի շրջանում, հասնում է 400 կիլոմետրի:

Մազնիտոգորսկը բազմաթիվ գործարանների մի հոկա քաղաք է, որ Երկար է տակիս հազարավոր գործարանների: Այս հանքավայրի շահագործման չափերի մասին գաղափար կազմելու համար բավական է այն փաստը, որ հաճախ մի պայթեցման ժամանակ միանգամից օգտագործում են 20 տոննա ամոնալ: Պայթեցումից հետո հոկա էքսկավատորները մեկ-Երկու օր շարունակ հավաքում են հանքանյութի այդ վիթխարի զանգվածը:

#### Որտեղ և ինչպես են առաջանում Երկարի հանքերը



Երկարի հանքավայրերն առաջանում են զանազան քարող Երկրաբանական պրոցեսների հետևանքով: Ինչպես Երկարի, այնպես էլ մյուս օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման գործում խոչըր նշանակություն ունեն Երկրակեղևում ընթացող գեորգիմիական պրոցեսները: Այդ պրոցեսներից է, օրինակ, քիմիական տարրերի տեղաշարժը Երկրակեղևում:

Բոլոր քիմիական տարրերը Երկրակեղևում հավերժական շարժման, տեղափոխման, վերատարածման ու վերակուտակման պրոցեսի մեջ են, պրոցես, որը ենթարկվում է բազմաթիվ օրինաչափությունների: Որևէ օգտակար հանածոյի հանքավայր որոնելու և գտնելու համար ամենից առաջ պետք է գիտենալ այդ հանքավայրի առաջացման և տարածման մասին եղած գիտական օրինաչափությունները: Դրանք շարադրվում են օգտակար հանածոների հանքավայրերի և գեորգիմիայի մասին եղած գրքերում, որոնք պատմում են տարրերի տարածման և տեղաշարժման, ինչպես նաև միմյանց նկատմամբ ունեցած վարքի մասին, թե որ տարրը որի հետ միանալու մեծ հակումներ ունի և որի հետ տվյալքաբար չի հանդիպում և այլն: Հանքավայրերի առաջացումները պայմանավորող օրենքները և նախապայմանները այնքան շատ են, որ անհնար է բոլորն այստեղ շարադրել:

Երկարի հաքավայրերի մի մասն առաջանում է Երկրի ընդերքից բարձրացող հրահեղուկ մասսայից, որը կոչվում է մագմա: Մագմայի որոշ տեսակներ մինչև սառելը և քարատեսակների վերածվելը՝ իրենց կազմից անջատում են Երկարով հարուստ միներալներ, որոնց կուտակումից և առաջանում է Երկարի հանքավայրը:

Այսօր մարդուն հայտնի մի քանի հազար զանազան հանքավայրերից 300-ը Երկար են պարունակում: Երկարի բոլոր հանքավայրերից ներկայումս շահագործման համար պիտանի են միայն նրանք, որոնցում Երկարի և թրվածի միացությունը կազմող մի քանի միներալներ՝ մագնետիտը

հեմատիտը, լիմոնիտը և այլն, ունեն բազականին մեծ կուտակումներ և շահագործման տեսակետից գտնվում են բարենպաստ պայմաններում, այսինքն՝ արդյունահանման համար շատ մեծ ծախսեր չեն պահանջում:

Երկարի հանքավայրերի որոշ տեսակներ էլ առաջանում են ջրային ավազաններում: Հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում գետերի միջոցով լեռներից դեպի ծովերն են տարվում հողմնահարվող ու բայթայվող պայառների հոկայական զանգվածներ: Աշխարհում կան շատ հորդառատ գետեր, որոնց ջուրը միշտ պղտոր է, և նրանցից վերցրած մի դույլ ջրում մի քանի հարյուր գրամ տիղմ է նստում: Պարզ է, որ այդ գետերը ծովերն են տեղափոխում միլիոնավոր տոննաներով տիղմ: Այդ տիղմերից շատերն առաջանում են երկարով հարուստ լեռնային բարատեսակների քայլայումից: Հետագայում, երկրակեղելի ծալքավորումների ժամանակ, ծովի հատակի շերտերից գոյացող լեռները վեր են բարձրանում և իրենց հետ բարձրացնում նաև երկարի և այլ հանքավայրեր, իսկ ծովի ջուրը գնում է ծածկելու մի այլ տարածություն:

Այդ պրոցեսները տարբեր ժամանակներում տեղի են ունեցել տարբեր ինտենսիվությամբ: Այժմ էլ դրանք շարունակվում են, բայց դանդաղ և մարդու համար գրեթե աննկատելի:

### Մե՛ծ են արդյոք երկարի պաշարները

Այսօր ամբողջ աշխարհում 30 անգամ ավելի շատ երկար է հանվում (շուրջ 500 միլիոն տոննա հանքանուր), քան մնացած բոլոր մետաղները միասին վերցրած:

Երկարի հարուստ հանքավայրեր կան Սովետական Միությունում, Ֆրանսիայում, Շվեյցարիամ, Խապանիայում, Անգլիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Կուրայում, Նյուֆաունդլենդում, Բրազիլիայում և այլ երկրներում:

Երկարի համաշխարհային պաշարների հարցով սկսեցին վրաղվել 1910 թվականից, երբ համաշխարհային կոնգրեսներում երկրաբան գիտնականները առաջ քաշեցին դրա անհրաժեշտությունը:

Յուրաքանչյուր երկիր մտահոգված է այն հարցով, թե որքան են իր երկարի պաշարները: Բոլոր երկրների երկրաբանների խնդիրն է հայտնաբերել այդ կարևորագույն մետաղի նորանոր հանքավայրեր և կուտակումներ:

Վերջին տվյալների համաձայն (1961 թ.) աշխարհի երկարի պաշարները կազմում են շուրջ 118 միլիարդ տոննա: Արևմտյան Եվրոպայում երկարի պաշարները վերջին ժամանակներու աճել են շնորհիվ հայտնի հանքավայրերի ավելի խորը հետազոտության:



Երկաթի պգալի պաշարներ են հայտնաբերված Շվեդիայի, Նորվեգիայի և Ֆինլանդիայի թւեռային շրջաններում: Արևմտյան Գերմանիայում հետազոտված են նոր նստվածքային ծագման հարուստ հանքավայրեր, որոնց շահագործումը ենթադրվում է սկսել 1966 թ.: Ասիայի երկրներում երկաթի պաշարների առանձին խոշոր աճ չի նկատվում:

Իրանում, Պակիստանում, Իրաքում և Սիրիայում երկաթի նոր հանքավայրեր են գտնված, բայց ոչ խոշոր չափերի: Երկաթի պաշարների մեծ աճ է նկատվում Աֆրիկայում՝ Ալժիրում, Գվինեայում և Լիբերիայում: Մի քանի նոր հանքավայրեր են գտնված Նիգերիայում: Երկաթի պաշարներն արագորեն աճում են նաև Սահրիկայի Միացյալ Նահանգներում և Կանադայում:

Երկաթի, ինչպես նաև մյուս օգտակար հանածոների պաշարները շարունակ փոփոխվում են մի կողմից արագ շահագործման և մյուս կողմից՝ նոր հանքավայրեր գտնելու պատճառով:

Երկաթի համեստ հանքավայրեր կան նաև մեր ռեսպոնտիկայում: Դրանք գտնվում են Հրազդանում, Գորիսում և Նոյեմբերյանում, սակայն նրանց վերջնական հեռանկարները դեռևս պարզված չեն:

Նոյեմբերյանի շրջանի Շլորկուտ տեղամասում 1947 թ. գտնված երկաթի ծովաման վառարանները, խարամներն ու երկաթե իրերը վկայում են այն մասին, որ անցյալում այս տեղ հանքաքարից երկաթ են ստացել:

Երկաթի ծովաման խարամներ հանդիպում են նաև Հրազդանի, Ալավերդու և Մեղրու շրջաններում:

#### Փրկեց քարածուխը



Երկաթը հանքաքարից անշատելու համար այն հալում և մշակում են: Այդ նպատակի համար պահանջվում է մեծ քանակությամբ վառելանյութ: Մինչև 18-րդ դարը որպես վառելանյութ օգտագործվում էր միայն փայտը: Անտառները գնալով նորանում և նվազում էին: Մի քանի երկրների անտառներին լիակատար ոչնչացում էր սպառնում:

Անտառներին ոչնչացումից փրկեց քարածուխը, որն սկսեց օգտագործվել 1710 թվականից: Պարզվեց, որ երկաթի հալման համար քարածուխը շատ ավելի նպատակահարմար է: Ներկայումս քարածիսի արդյունաբերությունը սերտորեն կապված է երկաթի արդյունաբերության հետ:

Ժամանակակից տեխնիկայի հզոր վերելքը և քաղաքակրթության վիթխարի տեմպը պարտական են այս երկուսին՝ սև մետաղների արքային և քարածիսին: